

ՀԱՄԱՐԱՆՈՒՄԻՆ ԵՐԱՆՈՒՄԻՆ ԳԵՂԱՐՈՒՄԻՆ

Ս ինննյի Գեղարուեստից Արուեստահան-
գիսին նշանաւոր սրահներէն մին է Աւստրիական

Բաժնին Պատմական Արահան, զոր հասկը ներկայա-
ցընենք մեր ընթերցողաց: Ասոր մէջ կը տեսնու-
ին վերջին 40 տարւոյ մէջ ծաղկեալ աւստրիացի
համբաւաւոր նկարչաց նկարներն, որոնցմէ նշա-




ՀԱՄԱՐԱՆՈՒՄԻՆ ԵՐԱՆՈՒՄԻՆ ԳԵՂԱՐՈՒՄԻՆ

նակներն են՝ Յ. ֆոն Ֆիւրբիշի, Օվերպէրի,
Էնրի ֆոն Քարլսֆելտի, Զապֆելի, Քուբսել-
վիգէրի, Գ. ֆոն Պլասսի, Ռալֆի, Գայերպայի,
Մաքարթի, Ռուպէնի, Գուրգաուէրի, Ամեր-

լինգի եւ այլ նշանաւոր ճարտարներու նկարները:
Մեր երկրորդ պատկերը կը ներկայացընէ
Գերմանական Բաժնին մէջ իտալ գրուած նկար-
ներէն համբաւաւորն՝ «Կայսր Ալեքսէյ» Զարուդ-

գեներալի գետնադամբանին մէջ, անուանեալ
նկարը: Ատիկայ Պերլինի գեղարուեստից վարչին՝
Անտոն Փոն Վեռներին նկարն է, որ կը ներկայա-
ցընէ նշնեցեալ Վիլհելմ կայսրն իւր ծնողաց
շիրմին առջեւ: Այս հռչակաւոր Պատկերին ինչ-

պէս նիւթն Նոյնպէս արուեստն տեսնողն սրտին
կը խօսին: Նշնեցեալ ծերունին 1870ին Յուլի-
սի 19ին երբ լուր կ'առնու թէ Ղաթուէն պա-
տերազմ հրատարակած է Բրուսիյոյ դէմ, ան-
միջպէս կ'երթայ արքունական գետնադամբանն



ԳԵՆԵՐԱԼ ՎԻԼԵԼԻՄ ՊԵՐԼԻՆԻ ԳԵՂԱՐԱՐՈՒԵՍՏԱՆԻՑ ՆԿԱՐ

եւ իւր ծնողաց մարմարեայ շիրմաց առջեւ կեցած մինչդեռ միտքն մարդկային կենաց անցաւ որով թեման վրայ կը խորհի, սիրան իւր ծնողաց դագաղին իւր իւր վերջին «Մնացէք բարեաւ» չէ կրնէ, եւ հոգւով զորացեալ կը գիմէ ի պատեհաբազմ: Այս նուիրական վայրն եւ նկարին հիանալի բնականութիւնն ամեն անմտոյի միտքն ու սիրտը նոյն խորհրդոց կը տանի: ... Այս օրս իւր շիրիմն ալ բարձրացած է ասոնց քով: . . .

Արուեստահանդիպին գերմանական Բաժնին մէջ յիշեալ պատկերէն զատ նշանաւոր է նաեւ նոյն Ա. ֆոն Վեռների ինքնանկար պատկերին: Նշնպէս Պիլմարը իշխանին պատկերն, որ պատհան մէջ պալատ կանգնուած է եւ գորգերով զարդարուած: Այս պատկերին իւրանկարը տեսնողն կը զարմանայ թէ այս զեղացեղ կերպարանոց՝ բայց թափանցիւի աչքը մարդն ինչպէս աշխարհս մատի վրայ կը դարձնէ:

ՔԱՐԱՅԵՐԵՆ

ՊԱՏՄԱՍԿԱՆ ՆՈՐԱՎԷՊ

ԳԱՆԵՍԻՆԵՆ

ԳԼՈՒԽ Բ.

Վերջին պատերազմը:

(Հարաւոր-Թիւի Ի-ՎԵՐ)

Այս միջոցին բանակին մնացած մասն ալ հաւաք, այն դուռնի՝ որ տարիներէ վեր ներքին Սպանիոյ մէջ կը կուռէր: Այս գուռին ալ իւր բոլոր բոլորովը կանգ առաւ: Գաղղիացիք կը փախչէին կատաղութեան արտասուքն յաշտ, եւ այս հին ու անուանի գաղղիական հենձնազօրն մերթ ընդ մերթ կը դառնար յարձակում՝ կ'ընէր ետեւէն յարձակող Սպանիացւոց եւ Անգղիացւոց վրայ: Իրեն ընկերացող ձիաւոր թնդանօթածովոց դուռնն ամեն յարմար դիրքը կը գործածէր գնդակներու հեղեղով թշնամին ողողելու: Բայց ի դուր: Կարծես բոլորդակ սպանիական-անգղիական բանակին մէջ մէկ միտք կար՝ Աւելինկըն կոմսին միտքն: Անմասն պիտութեամբ սպանիական թաւակուսին գաղղիական հենձնազօրուն վայրերն էր յուսահատական յարձակմանց գեմ՝ կը դնէր, եւ անգղիացի վիշապադուռնն անհատին քաջութեամբ անոնց վրայ կը շահատակէր:

Այսպէս երկու բանակներն անընդհատ պատերազմելով հեղեղեալ յաւաճ կու գային գեպ ի Պիտոստա գետին, որ անտարապիս երկրորդ որոշէ ձակարդ պիտի արուէր:

Եւ իրոց այնպէս ալ եղաւ: Այս ձակարդը թէեւ երկայն շտեւեց, բայց արեւահեղ էր եւ շատ զօհ տարաւ: Անգղիացիք եւ Սպանիացիք դարձեալ յաղթութեան դրօշ կանգնեցին, որով քայլքայեալ գաղղիական բանակին մէկ մասն լերանց

մէջ Պայոնի պաղտաւոյն դիմեց, միւս մասն ալ այն ամբարձիւններն՝ զոր Գաղղիացիք բռնած էին:

Միեւնոյն տեղի՝ ուր երկու շարաթ յառաւ կարաւանն յափշտակեցաւ, Գաւեսիլեա իւր յանդուգն գնդովն դարձած էր: Անկախ յամառութեամբ բռնած էին բարձունքն, որոնց եղբորք ծառի բնիկ կը կենային, անոնց ետեւն ալ բազմաթիւ Պատերազմողք զօրւոր լծակներ բռնած՝ ծառերու բնիկ վար զլորելու համար: Իսկ ծործորին մէջ ուր էր կառավար, փախապանաց խառնիխառն ամբսին հեղեղէ պէս յառաւ կը հոսէր: Գաւեսիլեա ի սկզբան արգելք չդրաւ իրենց փախաւան: Իւր քաջիկն պատրաստ հարցման ձեւով իւր երեսը կը նայէին: Բայց ինքն իւր մերկ սուրբ գետին ուղղած էր, եւ փախապանոց անաղղէլ կը խուժէին պատային վրայ: Քիչ մը հեռու անտառին մէջ Մարգրիտն գտնուեց ու քոյրն կեցած էին՝ յանն առնով մասնակից բլլալ փանդոց, քան թէ իրենց զինքն պահպանէլ ինչպէս կը բազմար Գաւեսիլեա: Իրենց քոյրն էր նաեւ Փրանկիսկեանն՝ որ միւր դորիսկ յաղթութեան լուր բերեցին ետքը Հենուացաւ բանակէն: Ինչորբոս ալ հոն էր. թէեւ իւր վերջերէ շէն ներք իրեն մասնակից բլլալ պատերազմին, կ'ուզէր գէթ ականատես ըլլալ վերջին քաջութեանց, զոր կը գործէին Պատերազմողք՝ որոնց զնգէն էր տարիներէ վեր:

Ինչորբոս երկու ժամ եւ ասելի փախաւանաց խառնուր աղմուկը կը լսէր, նոյնպէս Գաղղիացւոց վերջապահաց հրացաններու ձայնն, որոնք միշտ կը ջանային փախապանները պաշտպանել: Բայց Պատերազմողք բանակին մէջ խոր լուսով իւն էր, եւ վերջապէս անհամբերութեամբ սողալով զնայ Գաւեսիլեայի քով՝ հարցնելու թէ երբ պիտի սկսի բուն արուեստը:

«Աստիք մեզի բան մը չէն կրնար ընել այսուհետեւ, ըստ Գաւեսիլեա ցուցնելով անտարբերութեամբ այն ամբարն ու անաղղէլ խառնիխառն կը փախչէր: Երբ պատերազմող բուռնոր գայ, այն ատեն է մեր ժամանակը»:

Աւարտութեան նշան՝ որ զուարթացուց իւն գրկարտի գունաս գեղմն: Հանդարտելով այս տեղեկութեամբ՝ Գաւեսիլեայի քով մամուլ վրայ փռուեցաւ:

Վերջապէս պիտոսային ծայրն սկսաւ սուլիւններու փայլելու ցոնողութիւն, եւ անոնց մէջ մեծ հրամանատար մը շրջապատեալ բազմութիւն զինուորներէ: Հրացաններու ձայնն հետզհետէ կը մօտենար եւ երբեք երբեքն լեռնական թէթեթե թէթե զանօթ մը օդը կը թնդալոցնէր: Գաւեսիլեա նշմարեց նաեւ որ հրոյ գինն ծամբէն դուրս ալ ու ձախ կողմն ալ տարածուած էր, որմէ հետեւցուց որ գաղղիական վերջապահն ոչ միայն պիտոսային՝ այլ եւ երկու կողմն բարձունքն ալ բռնած էր, եւ եթէ այլ եւս յապաղի՝ ետ քաշուող Գաղղիացիք պիտի հանգիսկին իրեններուն: Այն ատեն ձակարդ բարձանց վրայ պիտի ըլլար, որուն ինք զինք կարող չէր տեսնել:

Վայրկեան մ'ալ համբերեց Գաւեսիլեա, եւ ահա կանխաւոր գունդն՝ որուն մօտեցաւ կը տեսնէր, արգէն իւր առջեւն էր: Այն ատեն անհայն